ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35-Ա

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.12.2017 Թ. ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Հաստատել Մարմարաշեն համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը

1.ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ — կողմ եմ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ — կողմ եմ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ — կողմ եմ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ — կողմ եմ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ — կողմ եմ
6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ — կողմ եմ
7. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ — կողմ եմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36_Ն

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշում է

1.Մարմարաշեն համայնքի 2017 թ. վարչական բյուջեի <<Պահուստային ֆոնդը>> պակասեցնել 277,0 հազ. դրամով .
ն/թ 4894 հոդվածը պակասեցնել 277,0 հազ. դրամով
2.Մարմարաշեն համայնքի 2017 թ. վարչական բյուջեի 1-6-1՝ <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> ծրագիրն ավելացնել 77,0 հազ. դրամով, որից
ա/4819 հոդվածն ավելացնել 77,0 հազ. դրամով
3.Մարմարաշեն համայնքի 2017 թ. վարչական բյուջեի 6-4-1՝ <<Փողոցների լուսավորում>> ծրագիրն ավելացնել 200,0 հազ. դրամով, որից
ա/4251 հոդվածն ավելացնել 200,0 հազ. դրամով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ
6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
7. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37-Ն

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշում է

1.Մարմարաշեն համայնքի 2017 թ. ֆոնդային բյուջեն ավելացնել 6271,0 հազ. դրամով:

2.Մարմարաշեն համայնքի 2017 թ. ֆոնդային բյուջեի 4-5-1՝ <<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագիրն ավելացնել 6271,0 հազ. դրամով

ն/թ ա/ 5113 հոդվածն ավելացնել 6271,0 հազ. դրամով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ — կողմ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ — կողմ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ — կողմ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ — կողմ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ — կողմ
6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ — կողմ
7. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ — կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1) <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի .

-1-ին, 2-րդ , 3-րդ , 6 -րդ ենթակետերի նկատմամբ կիրառել 0.5 գործակից

-8-րդ , 9-րդ , 10-րդ և 16-րդ ենթակետերի նկատմաբ կիրակել 0.3 գործակից

-4-րդ ենթակետի նկատմաբ կիրառել 0.75 գործակիցը

2) Հաստատել Մարմարաշեն համայնքաի 2018 թ.-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝.

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր / դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000/ տասնհինգ հազար/ դրամ.

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 /քսանհինգ հազար / դրամ.

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար /դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 / հազար հինգ հարյուր/ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 / հազար հինգ հարյուր/ դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր / դրամ.

4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ.

5. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.

6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 15000 /տասնհինգ հազար դրամ.

7.համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 /երկու հազար/ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 /երեք հազար / դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000/չորս հազար/ դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 / յոթ հազար հինգ / դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տաս հազար/ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար/ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 /երկու հազար/ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 /երեք հազար / դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 /չորս հազար / դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 / յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տաս հազար /դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար / դրամ.

8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 100 / հարյուր / դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսան հինգ հազար/ դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 /քսան հինգ հազար/ դրամ.

10. համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 /վեց հազար /դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 /տասներկու հազար/ դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 /տասնվեց հազար / դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 / քսանհինգ հազար / դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 35000 /երեսունհինգ հազար / դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 / հազար / դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 /երկու հազար / դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 / չորս հազար / դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 / ութ հազար/ դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 / քսանհինգ հազար / դրամ.

11. Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 /վեց հարյուր/ դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 / հազար / դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 / չորս հարյուր հիսուն / դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 100 /հարյուր/ դրամ.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 50/ հիսուն/ դրամ :

12. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 /հարյուր հազար/ դրամ.

13. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 /երեք հազար / դրամ.

14. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500000 / հինգ հարյուր հազար/ դրամ:

15. համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝7000000 / յոթ միլիոն / դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տաս միլիոն / դրամ:

16. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

17.ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով /շահագործման թույտվություն/ փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 /հինգ հազար/

18 .համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

19.համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

20.համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ..

21.համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝ յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 100 /հարյուր / դրամ.

22. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափը՝ համայնքի բնակիչների համար՝ 5000 /հինգ հազար / դրամ , այլ համայնքների բնակիչների համար 10000 /տաս հազար/ դրամ.

Կողմ -7	Դեմ -0	Չեռնպահ -0
1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ		
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ		
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ		
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ		
6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ		
7. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39-Ն

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի պահանջներով և Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով միջգերատեսչական հանձնաժողովի 26.08.2015 թ.-ի իվ 131 դրական եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Նկատի ունենալով, որ Արարատի մարզի Մարմարաշեն համայնքը 2017 թ.-ի դեկտեմբերի 5-ին օրենքով սահմանված կարգով կազմակերպել էր համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերի աճուրդ վաճառք՝ մեկնարկային գինը սահմանելով հողի գործող կադաստրային արժեքի 100 %-ի չափով և աճուրդի հանված 22 միավոր հողերից 7 միավոր հողերի աճուրդը չի կայացել հայտերի բացակայության պատճառով, ուստի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության ներքոհիշյալ հողամասերը՝

1/ միավոր N 1-0.0500 հա , /ծածկագիր 03-058-0238-0019/ ,հասցեն՝ գ. Մարմարաշեն , 1-ին թաղամաս, 1-ին փողոց, թիվ 2

2/ միավոր N 2-0,0500 հա , /ծածկագիր 03-058-0238-0020/, հասցեն՝ գ. Մարմարաշեն , 1-ին թաղամաս, 1-ին փողոց, թիվ 4

3/ միավոր N 3-0,0500 հա, /ծածկագիր 03-058-0238-0018/, հասցեն՝ գ. Մարմարաշեն , 1-ին թաղամաս, 1-ին փողոց, թիվ 6

4/ միավոր N 12-0,0500 հա, /ծածկագիր 03-058-0238-0022/ , հասցեն՝ գ. Մարմարաշեն , 1-ին թաղամաս, 1-ին փողոց, թիվ 24

5/ միավոր N 20-0,0500 հա, /ծածկագիր 03-058-0238-0032/, հասցեն՝ գ. Մարմարաշեն , 1-ին թաղամաս, 1-ին փողոց, թիվ 40

6/ միավոր N 21-0,0500 հա, /ծածկագիր 03-058-0238-0031/, հասցեն՝ գ. Մարմարաշեն , 1-ին թաղամաս, 1-ին փողոց, թիվ 42

7/ միավոր N 22-0,0500 հա,ծածկագիր 03-058- 0238-ից , հասցեն՝ գ. Մարմարաշեն , 1-ին թաղամաս, 1-ին փողոց, թիվ 44

Աճուրդ վաճառքի միջոցով օտարելու համար տալ թույլտվություն:

2. 1-ին կետի 7 միավոր հողամասերի աճուրդ վաճառքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50% չափով:

3. Գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքերի գործառնական նշանակության 03-058-0076-0019 ծածկագրով 0,052 հա հողամասը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու համար տալ թույլտվություն:

4. 3-րդ կետով նշված հողամասի աճուրդ վաճառքի մեկնարկային գինը սահմանել 60000 / վաթսուն հազար/ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ — կողմ են

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ — կողմ են

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ — կողմ են

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ — կողմ են

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ — կողմ են

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ — կողմ են

7. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ — կողմ են

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ